


# ԱՐԱՐԱՏ

ամսագիր

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ ԺԱ. ՄԱՐՏ **1870** Բ. ՏԱՐԻ


## Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

---

### ԲԱՆ ԶՐՊԱՐՏՈՒԹԵԱՆ՝ ԼԻԲԱՆԱՆՑԻ ԿԱՐԾԵՑԵԱԼ ՀԱՅՐ ԳԵՐՈՎԲԷԻ ԱՌ ԱԶԳՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԱՌ ՎԵՐԱՏԵՍՈՒՉՆ ԲԵՐԻԱ ՔԱՂԱՔԻ ՍԻՄԷՕՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ.*

*Նանիր և խոտան պարծանք անարեաց,*
*Շորթել գողուղի զանուն յաղթանաց.*
*Ոչինչ են պարծանք ճիրանաւորաց,*
*Վէր տալ յանզգոյշ այտից երեսաց.*
*Թէ որ ոչ մնացէ 'ի կռիւ մրցանաց,*
*Ընդ քեզ մի՛ կարծեր զայն քեզ ձիր քաջաց.*
*Ահա և Նժոյգք 'ի ցլուց եղջերաց,*
*Խոյս տան և խորշին ըստ խռնչականաց.*
*Ա՛ղէ յորդորեա յուշ յիշատակաց,*
*Պատգամք տէրունեան զաշխարհատիրաց.*
*Շահել զաշխարհի մթերս ընտրանաց,*
*Անտի զի՞նչ օգուտ ոգւոյդ տուգանաց.*
*Ցորչափ խորդանաս 'ի սուրբ մօր գրկաց,*
*յագուրդ ոչ գտցես 'ի ստեանց օտարաց.*
*Թէ ոչ 'ի ծոց մօր սուրբ եկեղեցեաց,*
*'Ծնցիս վիրստին՝ չունիս յոյս կենաց.*
*Որ ոչ մտանէ ընդ դուռն ոչխարաց,*
*Գող և աւազակ Քրիստոս զայն ասաց.*

---

*) Տես նախընթաց համարն երես 243

Առ ինչ է գալուստ գոզ տաղակաց,
Քան թէ գոզանալ տալ մահ դառնութեանց.
Եղուկ ընթացից բազմամեայ ալեաց,
Զի դեռ ոչ ժաման ուղղոյն ուղղութեանց.
Եղուկ և ընդ քեզ գլերց և ռամկաց,
Երկինք և երկիր վկայք պատգամաց.

Զայն բան զրպարտութեան ընկալեալ նոյն Սիմէօն Եւդոկիացի՝ առաքէ առ Կիրակոս Կաթողիկոս Կիլիկեցի. և նա առաքեալ ՝ի Պօլիս առ տիրացու Գրիգոր մեծիմաստ վարժապետն փեշտիմալճեան խնդրելով զպատասխանին. և որոյ պատասխանեալ ՝ի Ճ. Շնորհն Հոգւոյն Աստուծոյ՝ յանդիմանէ զպատութիւն նոյին բանին ճշմարտութեան. կարկէ զբերան նորին ոչ ընդարձակել ՝ի յաւիտեան:

## Ի ՏԻՐԱՑՈՒ ԳՐԻԳՈՐ ՄԵԾԻՄԱՍՏ ՎԱՐԺԱՊԵՏԷ.

Չար է բնաւոր կուրութիւն մտաց,
Չարագոյն քան զայն կամաւոր նախանձ.
Պաշարեալ է քո յայս զառն չարեաց,
Ո՛չ ուղիղ դատիս զկարևոր իրաց.
Զազգս մեր ողջոյն ողբաս ապաղղեաց,
Թէ են մոլորեալ ՝ի յուղիղ շաւղաց.
Քեզ ասեմ սրբեա՛ ոչ զաչս յարտասուաց,
Այլ զակն հոգւոյդ ՝ի կրից մախանաց.
Տեսցես ճշգրտիւ և ոչ կարծ ՝ի կարծ,
Թէ ուղիղ գնամք զհետ մեր սուրբ հարց.
Պարծիմք իրաւամբ ՝ի շուք մեր նախնեաց,
Զի զաւանդ նոցին պահեմք գիր զգանձ.
Չեմք ՝ի Նեստորի սահեալ ՝ի հերձուած,
Զոր և Նզովիւք առնեմք արտաքսած.
Իսկ արդ ոչ ասեմք թէ Հոգին Աստուած,
Բղխի ՝ի յերկուց իւրոց Էակցաց.
Քանզի բղխումն է եղումն ՝ի սկզբնէ,
Որ է առաջին ՝ի կարգ պատճառաց.
Բղխումն ասել ՝ի յերկուց անձանց,
Է ասել յերկուց նախկին սկզբանց.
Ապա մոլորիք ըստ չարափառաց,
Զերկու սկզբունս մուծեալ ՝ի յԱստուած.
Դաւանիմք զՀոգին բղխումն ՝ի Հօրէ,
Զերթ Որդւոյ յայտնէ ըստ ուղղափառաց.

Նոյն եղող յՈրդւոյ որպէս յաղբերէ,
Զի առնու յՈրդւոյ յանէից յաւիտեան.
Զայս կանխաւ ուսոյց Հայր մեր լուսազգեաց,
Զոր խոստովանիմք մինչ յետ կենաց.
Եթէ Հայր յանձնէ՝ Որդի ՝ի Հօրէ,
Հոգի ՝ի նոցունց շնչումն կենաց.
Փախչիմք յամփրեալ յամբարիշտ ուսմանց,
Որպէս ՝ի թիւնից օձից և կարճաց.
Ըզմի բնութիւն ասեմք ըստ սուրբ հարց,
Փոխան մի անձին որ յերկուց բնութեանց.
Հրաժարեալ հոգիք երրեակ կացութեանց,
Մատչին յանդիման Քննողին գաղտնեաց.
Որք են կատարեալք գործով բարութեանց,
Հանգչին ՝ի յերկինս, տեսանեն զԱստուած.
Անհաւատք և չարք անցեալք ՝ի փառաց,
Մատնին ՝ի գեհեան՝ ուր լալ է աչաց.
Իսկ որ անվճար զղջացողք մեղաց,
Մնան նպաստից սուրբ պատարագաց.
Տուրք՝ ողորմութիւնք՝ մաղթանք կենդանեաց,
Դասակից սրբոց առնեն անկասկած.
Բայց արդարութեան պսակ լուսապանծ,
Մնան մարմնոյն վարձք մինչ ՝ի կատարած.
Այլ քան երկու Յովհաննու պայլին,
Անսացող եղեն ոմանք տգիտաց.
Եղին թէ հոգիք ընտրելոց արանց,
Մինչ ՝ի կատարած ոչ տեսցեն զԱստուած.
Տալն թաթաւեալ զհաց նուիրաց,
Չէ նորահնար, այլ աւանդ նախնեաց.
Տուրմնեան ժողով անշուշտ պատուիրեաց,
Սրբատուփ ունել մեն մի երիցանց.
Զի յայն պահեսցի կենսաձիր այն հաց,
Թաթաւեալ յարեան ՝ի պէտս հիւանդաց.
Այն զի հաղորդել յերկուց տեսակաց,
Հայրապետք Հռովմայ եղեն կանխասաց.
Այլ և ժողովքն Կարթագինեայ հարց,
Ուր Օգոստինոս վարդապետ եկաց.
Պատուիրէ ջամբել յարենէն կենաց,
Հեղլով ՝ի բերան ծանր հիւանդաց.
Բաժակ անապակ նուէր սրբութեանց,
Ի լուսաւորչէն ուսաք ըստ յաւնաց:
Ըզտօն Ծննդեան և ըզ Յայտնութեան.
Տօնել ՝ի մի օր՝ սովորոյթ նախնեաց.
Զուր զրպարտութիւն անմիտ թշնամեաց,
Նշան խառնման լինել բնութեանց.